

“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ՓԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅԵՄԲԵՐ 1, 1903

ԹԻԻ 11

ՉԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Կը խոստովանինք թէ որսորդութիւնը հրապոյր չունի մեզի համար, և ապրող բանի մը վրայ երբեք հրացան պարպած չենք մեր կեանքին մէջ: Եթէ պարտաւորութիւնք մեր ուտելու կենդանին մեր ձեռքով սպաննել, բուսակերութիւնը ընտրել պիտի հակամիտէինք: Ըսել չենք ուզեր թէ մասվաճառները կարծրասիրտ կ'ըլլան հարկաւ, վասն զի հակառակը գիտենք, և կը ճանչնանք յոյժ պատուական մարդիկ որոնք մասվաճառ էին: Բայց այնքան մեծ է մեր սուկումը կենդանիներու մինչեւ անգամ վայրկեան մը ցատալու դէմ, որ բոլոր պատուաւոր հետաներուն մէջ գրեթէ վերջինը պիտի ըլլար մասվաճառութիւնը եթէ հարկ ըլլար արհեստ մը ընտրել մեզի համար: Թերեւս հակասութեան պէս բան մը պիտի թուի եթէ խոստովանինք թէ ձկնորսութիւնը շատ հրապուրիչ է մեզի համար: Բայց երբեք չթուիր թէ շատ կը չարչարուին ձուկերը, ծովու այդ պաղարիւն ընակիչները, որոնք երբ կը բռնուին, կը ցատկըտեն քանի մը վայրկեան և յետոյ հանդարտ կը պառկին: Կարող եղած չենք շատ ձկնորսութիւն ընել մեր տղայութեան օրերէն հետէ, բայց



անոր նման բնութիւնով ձուկ մը, աղէկ կ'ընէ որ դարբի իր բարեկամ տիկիններուն հետ խօսելէ և կրցածին չափ հանդարտ և լուռ կենայ:

ՉԻՆԱՑԻ ՍՈՂՈՄՈՆ ՄԸ

Գ. Թագ. Գ. 16-28 համարներուն մէջի պատմութիւնը, ուր կը տեսնենք այն մեթոտը զոր Սողոմոն գործածեց հասկնալու համար թէ ո՛րն է ճշմարիտ մայրը, երբ երկու կիներ իմն է կ'ըսէին տղուն մը համար, իր նմանը ունի Չինական աւանդութեան մը մէջ որ հետեւեալն է. երկու եղբայրներ և իրենց ընտանիքը մէկտեղ կը բնակէին: Անոնց եր-

անիկա սիրելի ժամանց մը եղած էր մեզի: Անոր զօրաւոր հրապոյրներէն մին է որ յաճախ մարդը այսպիսի հաճելի տեղեր կը տանի: Նայէ պատկերին մէջ տեսնուած սա ձկնորսին վրայ որ իր կարթը ձգած է գետակի մը մէջ որ ոլորուն ընթացքով կ'երթայ ծառերով և կանաչ խոտով ծածկուած գետեզերքներուն մէջտեղէն: Եթէ ան այնպիսի մարդ մին է որուն օրերը սովորաբար ժիր գործունէութիւնով կ'անցնին, գտած է իր յոյնած ուղեղը հանգչեցնելու աղէկ տեղ մը: Միայն թէ եթէ որսալու ձուկը կարմրախայտ (ալա պալըզ) է և կամ

կուրջին կիներն ալ մէյմէկ զաւակ ունեցան մէկ երկու օրուան միջոցին: Աւելի տարեց կնոջ զաւակը դիպուածով ճմուռեցաւ ու մեռաւ: Միւս կնոջ բացակայ գտնուած միջոցին, մեռած տղին մայրը փոխանակեց տղաքը: Ներք շուտով իմացաւ խարդախութիւնը: Մեծ ներք չուզեց ողջ տղան տալ, և անոր մայրը բողբոջեց Եանկի, գաւառին դատաւորին: Դատաւորը չկրնարով հասկնալ թէ ո՛ր կինը ճշմարտութիւնը կը խօսէր, վերջապէս ըսաւ, Որովհետեւ երկուքդ ալ տղան իմն է կ'ըսէք, բանք ես ինքնս պիտի վճռեմ: Բայց,՝ աւելցուց, «վաղը մա-

նուկը ծով պիտի տանի՞մ և ջուրը պիտի նետեմ:” Հետեւեալ առաւօտ մեծ բաղնիքին հաւաքուած էր դատարանին դուրսը, այս տարօրինակ դատաստանին էլ չը տեսնելու համար: Կեդրոնական մեծ դուռը կոնակի վերայ բաց կը կենար. և թափօրը սկսաւ դուրս ելլել, մունետրիկները հրատարակեցին դատարանին մօտենալը ինն անգամ հնչեցնելով ծնծղան, և Օ՛, օ՛, օ՛ աղաղակներով վազեցին պաշտօնեաներ իրենց ձեռքը կրելով ժանդոտ երկաթ շղթաներ, վարձահատոյց արդարութեան նշանները, նաև աղղապիւրներ որոնք դատարանին պաշտօնական տիտղոսներ կը կրէին. յետոյ կու գային անոր հովանոցն ու հովահարը, և ամէնէն ետքը նոյն իսկ մանտարինը կու գար իր պատգարակով

զոր կը կրէին չորս անձեր: Անոր ակոսը բաց էր առաջաւորը օրէնքին տրամագրութեան համեմատ: Անոր թանկագին աւանդը օղէն պաշտպանուած էր իր գլխանոցով և փաթոյթներով. երբ ծով հասան, մանտարինը իր ակոսէն ելլելով քաղցր դէպի ջրեղբը և ձեռքինը օրելով այլքներուն մէջ նետեց: Անիկա ջուրին մէջ տարուբերեցաւ, մինչև որ դեռահաս կինը չկրնարով հանգարտ կենալ այդ տեսարանին առջև, ջուրին մէջ վազեց և իր բազուկներուն վրայ առաւ մեծ ձուկ մը, որուն վրայ կապուած էր մանկիկին զգալը և խանձարուրի լաթերը: Ճըմարիտ մայրը յայտնուած էր, որ իր մանկիկը ողջ գտաւ դատարանին մէջ:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿՈՒՅԱՆԱ

Շատ գրուեցաւ վերջերս թերթերուն մէջ վենեցուէլայի վրայ, նախ այն քաղաքային պատերազմին առթիւ որ յամառաբար մղուեցաւ, և երկրորդ վենեցուէլայի ծովեղբրքներուն ու մակրոմութեան առթիւ Գերմանիոյ, Անգլիոյ և իտալիոյ նաւատորմերէն: Այս երկու չարիքներն ալ բարեբաղդապէս վերջացած կ'երևնան: Բայց վենեցուէլայի և ումակրոմ Պետութիւններուն մէջտեղ գոյութիւնն ունեցող խնդիր մը հիմա լա Հէի իրաւարար ատեանին առջև կը գտնուի:


Եթէ աշխարհացոյցներուն վրայ նայիք, պիտի տեսնէք թէ վենեցուէլայի արևմտեան սահմանադիրին կից երկիրն է Բրիտանական Կոյսնա: Այս է Անգլիոյ միակ ստացուածքը Հարաւային Ամերիկայի ցամաքին վրայ: Նշանակութեան արժանի իրողութիւն մըն է թէ՛ թէպէտ Անգլիա ինքնին Եւրոպայի մէջ կը գտնուի, Բրիտանական Պետութիւնը շատ մը աւելի ընդարձակ ստացուածքներ ունի Ասիոյ, Աֆրիկէի, Հիւսիսային Ամերիկայի և Աւստրալիոյ մէջ քան Եւրոպայի մէջ: Եւ մինչև անգամ Հարաւային Ամերիկայի մէջ անոր Բրիտանական Կոյսնա գաղութը քիչ մը աւելի մեծ է քան Մեծ Բրիտանիա և իրլանտա: Բայց Բրիտանական Կոյսնայի բնակիչները 300,000 են միայն: Ասոնց իւր 10,000ը

քան առատ է որ անոր դետերը միշտ տղուտ են, ինչպէս կ'ըլլան վոսփոր վազող հոսանքները յաճախ սաստիկ անձրեւէ ետքը: Պատկերին մէջ տեսնուած շէնքերը ձորթատունի կառավարական շէնքեր են, որոնց մին է Բրիտանական կառավարչին բնակարանը:

ԿՈՒՌՎԵՐ ԶՂՋԱՅՅԵՐ ԵՐ

Ահա Չինացոց հաւատքին վերաբերեալ զուարճալի պատմութիւններէն մէկը. զուարճալի՛ վասն զի այդ հաւատքը շատ անկեղծ է և սակայն ստույգութեան հաւատք է:

Չինացի աղքատ մարդ մը գնաց աղօթել կուռքի մը որ տաճարին դուրսը դրուած էր: Երանօթ չէ թէ ինչ սը դրուած էր, Երանօթ չէ թէ ինչ խնդրեց իր աղօթքին մէջ, բայց խոստացաւ թէ եթէ



կրկին նախնի ժողովրդին սերունդն են, 3,000է պակասը Եւրոպացիներ են, և մնացածն են մեծ մասով իտալի շիկներ, որոնց նախահայրերը Աֆրիկէէ բերուեցան իբրև գերիներ, կամ Հնդկաստանէ և Չինաստանէ գաղթողներ են: Բնակիչներուն մեծ մասը գետերուն քով գտնուած հովիտներուն մէջ կը գտնուի և շաքարեղէգի մշակութիւնով կը զբաղի: Գրեթէ բոլոր արտածութիւնն են շաքար, մուսս կոչուած ուսփը և ուոմ, որոնք շաքարեղէգէն կը շինուին, նաև ոսկի, որոնց քանի մը հարուստ հանքերը գտնուած են: Գլխաւոր քաղաքն է Ճորձթաուն, որ 50,000 է աւելի բնակիչ ունի: Բոլոր փողոցներուն քովերէն, բացի կեդրոնական փողոցէն, ջուրի հոսանքներ կը վազեն: Այս հոսանքներուն եզերքը յաճախ կը տեսնուին գեղեցիկ ծաղիկներ բացող տունկեր: Կոյսնայի մէջ անձրեւն այն

նիւմ. եթէ զանիկա քեզի տամ, ինչպէս պիտի հերկեմ արտերս,» ևն., և խնդրեց որ կուռքը իրեն թող տայ կովը իր քով պահել: Բայց կուռքը չհաւանեցաւ: Վերջապէս մարդը չկրցաւ ուրիշ բան ընել, բայց եթէ կովը կուռքին ակոսին կապել, և ցաւով տուն դարձաւ, և կը մտածէր թէ ինչպէս պիտի ապրէր առանց աւոր: Նստաւ իր սենեակին մէջ, խորհելու համար իր նեղութիւններուն վրայ. և ահա, հազիւ նստած էր, լսեց մեծ աղաղակ մը: Գուռը գնաց հասկնալու թէ ինչ կար: Տեսաւ որ կովը ճամբէն կու գար կրցածին չափ արագ, ետեւէն ալ կուռքը քաշելով: Ժողովուրդը ո՛րքան կը խնդար, և ո՛րչափ ուրախ եղաւ աղքատ մարդը: Ասանկ բան պատահած չէր որ կովը կուռքը բերէր: Իրաւ որ պատահած չէր: Մարդը մտածեց թէ կուռքն էր որ զղջացեք էր իր սրտին անթրու-

Թեանը համար և կովը ետ բերած էր իրեն:


ՊՍԱԿԱԻՐ ԱՐՈՒԵՍՏԻՑ

«Հայր» ըսաւ Յակոբիկ իրիկուն մը, «կրնամ քու երրորդ մատդ շիտակ պահել մինչ այդ ձեռքիդ միւս մատերը կ'ամփոփես»: Յակոբիկի հայրը խընդաց ցուցնելով թէ գիտէր: Յակոբիկ իր հօրեղբօր և տղոց առաջարկած էր ատիկա: Բայց ինք փորձած էր, նախ իր ձախ ձեռքով, վասն զի քիչ մը կը պարծէր թէ բաներ կրնար ընել իր այդ ձեռքով ալ: Ծատ անգամ ըսած էր թէ եթէ զինք մշատեցուցած չըլլային իր մանկութեան ատեն, կրնար իր թէ՛ աջ թէ՛ ձախ ձեռքը հաւասարապէս գործածել: Իրեն կատարելապէս բնական եղած էր դգալը ձախ ձեռքով գործածել, բայց մայրը չէր ուզեր որ ինք այդպէս ընէ: Յակոբիկի հայրը քիչ մը փորձ ընելէն ետքը իր ձախ ձեռքին երրորդ մատով, ըսաւ, «Ատիկա տարօրինակ է, բայց քիչ մը վարժութիւնը կը բաւէ յաջողելու համար»: «Ես գիտեմ քանի մը ուրիշ բաներ գործող դուն չես կրնար ընել»: ըսաւ Յակոբիկ հանդարտութեամբ: Տան ներսը վաղեց, և երբ դուրս եկաւ, ձեռքն ունէր քանի մը լուցկի, հաւկիթ մը և անձեռոց մը: «Հիմա», ըսաւ, լուցկիները և անձեռոցը աթոռի մը վրայ դնելով և հաւկիթը հօրը տալով: «Հիմա», կըրկնեց Յակոբիկ, «հաւկիթը իր երկայնքովը դիր երկու ձեռքերուդ մէջտեղ և ջանա կտորել զանիկա»: Հաւկիթը, որ տակաւին փոփոխութիւն կրած չէր, շուտով Յակոբիկի գրպանը մտաւ, և անձեռոցը անոր հօր աչքերուն վրայ կը գտնուէր: Ժամացոյցը ձեռքն առաւ: «Հիմա», ըսաւ, «կատարելապէս անշարժ կեցէք հինգ վայրկեան»: «Ատիկա դիւրին է», ըսաւ հայրը: «Դուն շարժեցիր չըթուէր», ըսաւ Յակոբիկ, անձեռոցը բանալով և լուցկի մը տալով իր հօրը: «Լուցկին երկրորդ մատիդ ծայրը դիր: Հիմա կտորէ ատիկա նոյն ձեռքիդ առաջին և երրորդ մատերով»: հրամայեց Յակոբիկ: Երբ լուցկին առանց կտորուած ըլլալու հաւկիթին քով գնաց, Յակոբիկ ըսաւ իր հօրը որ աղէկ մը նստի իր աթոռին վրայ: «Ոչ թէ աթոռին եզրը»: ըսաւ Յակոբիկ: «Հիմա ելիր, հայրիկ, առանց առաջ ծռելու կամ ոտքդ աթոռիդ ներքև հրելու»: «Հիմա», ըսաւ Յակոբիկ: Բայց հայրը տեսաւ որ Յակոբիկի մայրը կու գար,

ուստի ածապարեց ձեռքն առնել իր լրագիրը: Յետոյ երբ մայրը գնաց, նորէն Յակոբիկի դարձաւ և ըսաւ, «Իսէ ինձի, դուն կրնամ ընել այդ բաները»: «Դուն չես կրնար ատոնց ունէ մէկը պահանջել ինձմէ», խուսափողական պատասխանը տուաւ Յակոբիկ:

ՀՈՐԷՑՍ ՊՐՇՆԵԼ

Թերևս անցեալ դարու Ամերիկացի եկեղեցականներէն ոչ մէկը աւելի խոր պղբեցութիւն ըրած է իր ժամանակի խորհող անձերուն վրայ քան Հորէյս Պըշնէլ: Մի Պիչըր և ուրիշներ աւելի պերճախօս և աւելի ունկնդիրներ ունեցող տաղանդաւոր ատենաբաններ էին, բայց Տր. Պըշնէլի



միտքը հազուագիւտ սրութիւն և խոթութիւն մը ունէր: Անոր զիրքերը կրկին և կրկին կարդացուած են, և անոր սորվեցուցած վարդապետութիւններէն մէկ քանին, որոնց վրայ յիսուն տարի առաջ անոր եղբայրակից քարոզիչներէն շատը կասկածով կը նայէին, հիմա գրեթէ ամէն ալ կ'ընդունուին: Ան էր մին այն մեծ մարդոցմէն, որոնք իրենց դարէն աւելի առաջ անցած են: Անոր գիրքերը, որոնց մէջ «Բրիտանիական Միտք»ը և «Բնութիւն և Գերբնական»ը ամէնէն աւելի ծանօթ են, շատ բազմաթիւ էին, և անոր գրական մեծ գործունէութիւնը նախանձելի էր հակառակ անոր վատառողջութեան: Եւ անիկա հեղինակ մը չէր միայն: Հարթֆորտ քաղաքը, ուր ան քարոզեց և ուր իր կեանքին մեծ մասը անցուց, իր հասարակաց գեղեցիկ

պարտէզը անոր նախաձեռնութեան կը պարտի, և անոր անունով կը կոչուի: Տր. Հորէյս Պըշնէլ ծնաւ 1802ին, Եէյլ Գոլէճէ ընթացաւարտ եղաւ 1827ին, և մեռաւ 1876ին:

ՊԵՐՃԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Պերճ հագաւ իր հանդերձը, դուրս գլխարկը և դպրոցէն դուրս ելաւ շատ կամաց և անոր աղուոր դէմքը շատ շուարած և վրդոված էր: Դպրոցի տղոցմէն ոմանք արդէն դուրսը կը գտնուէին, և կը փոսփային ու կը խնդային բանի մը վրայ: Պերճ գիտէր թէ ինչ էր պատճառը, բայց ուզած չէր անոնց հետ միաբանիլ, և փոխանակ մէկզի վաղելու, ինչպէս սովորութիւնն էր, կամաց կամաց կը քալէր: Ճշմարտութիւնը սա էր որ Պերճ անհանգստութիւն մը ունէր իր ներսիդին: Դոր աշակերտ մը եկած էր դպրոց, փոքրիկ Աննիկ: Աննիկի հայրը թշուառ արբեցող մըն էր, և ընտանիքը յետին ծայր աղքատ: Մայրը իր բոլոր կարողութեամբ կ'աշխատէր, բայց փոքրիկ Աննիկ խղճալի երևոյթ մը ունէր գոյնը նետած և պղտիկցած էր ցնցոտի հանդերձներուն մէջ: Պերճ իմացած էր թէ կու պիտ և անխորհուրդ քանի մը տղաք միտք ունէին խաղ մը խաղալ և զուարճանալ երբ Աննիկ դպրոցէն դուրս ելլէր տուն դառնալու համար, և կէսօրէն ետքի բոլոր ժամանակին մէջ իր խիղճը զինք սաստիկ կը յանդիմանէր: «Դուն պէտք է որ աշխատես զանոնք արգելելու», ըսաւ խիղճը: «Բայց անոնք մտիկ պիտի չընեն ինձի պէս փոքրիկ տղու մը»: «Ուրեմն դուն օգնելու ես Աննիկի: փոքրիկ աղջիկը պիտի վախնայ եթէ անոնք խնդան իր վրայ»: «Այն ատեն իմ վրաս պիտի խնդան», և Պերճ սոսկում գգաց երբ մտածեց այն աղաղակներուն վրայ գործնք պիտի լսէր եթէ ինքզինք Աննիկի պաշտպան ցուցնէր: «Էհ, սեպենք թէ պիտի խնդան», ըսաւ խիղճը անգթաբար, «եթէ դուն քու մայրիկիդ բարի զաւակն ես, պէտք չէ որ բաւական քաջ ըլլաս և համբերես: Դուն անցեալ օր ուղեցիր քաջ և բարի գործ մը ընել. ահա քեզի առիթ մը: Եթէ չես կրնար ընել այս պղտիկ գործը, քեզի դժուար պիտի ըլլայ մեծ գործեր ընել»: «

Այսպէս անցած էր այդ օրը և իրիկունան մօտեցած, և հիմա Պերճ պէտք էր որ որոշէր մէկ կամ միւս ճամբան. բայց անոր այնպէս կ'երև

նար թէ որոշում մը ընելու վիճակին մտեցած չէր :

«Մենք լաւ մը պիտի զուարճանանք», լսեց Պերճ թէ կ'ըսէր Հրանտ, «և ի՞նչ լաւ տեսարան մը պիտի ըլլայ ան : Օ՛ն» : գոչեց երբ Աննիկ երևցաւ : «ատիկա ցնցոտիներու տոպրակ մըն է որ կը պտըտի» : Հրանտի շուրջ գլուխը տալով աղաքը աղաղակ հանեցին երբ անիկա կը խօսէր այսպէս : Եւ Պերճի երեսը կաս կարմիր եղաւ Աննիկի և իրեն համար զգացած ցաւէն : «Տղաք, կ'աղաչեմ, մի ընէք», ըսաւ եռանդով, «աղջիկը յանցանք չունի. և երբ խնդաք անոր վրայ, շատ պիտի ամչնայ ու տրամի» : «Օ՛, տուն վազէ», ըսաւ Հրանտ արհամարհելով. «ոչ թէ դուն, հապա ո՞վ որ ալ ըլլայ չկրնար արգելել զիս» : Պերճ առաջ քայլեց քանի մը քայլ : Հիմա ի՞նչ ընէր : Ո՛հ, ինչո՞ւ չէր կրնար շիտակ տուն երթալ. զանոնք չէր կրնար արգելել. անոնք հաւանօրէն աւելի պիտի խնդային եթէ ընէր բան մը : «Բայց Աննիկ այնպէս պիտի զգայ թէ բարեկամ մը ունի», ըսաւ խեղճը : «Ես չ'ի՞նչ» : ըսաւ Պերճ քիչ մը խեղճով. «Ես չ'ի՞նչ» : և հակառակ իր մանչ տղայ մը ըլլալուն՝ աչքերը արցունքով լեցունեցան երբ մեծ դրան կողմը դարձաւ : «Ո՛հ, Պերճ, ես կ'ամչնամ քեզի համար», ըսաւ ներսի հաւատարիմ աղջկաբարձ : «Ի՞նչ պիտի զգաս երբ մայրիկը իր երկու ձեռքերուն մէջ առնէ քու երեսդ իր «գիշեր բարի»-ի համարը տայու ատեն և քեզ անուանէ իր սիրելի պատանին : Կ'ուզե՞ս անոր երեսը նայիլ» :

Պերճ վայրկեան մը վարանեցաւ, և ի՞նչ ընելիքը չգիտցաւ. բայց դարձաւ և արագ մը գնաց հոն ուր կը կենար Աննիկ վախէն դող ելած : «Ինձի հետ եկուր, Աննիկ, ես ալ քու ճամբէդ պիտի երթամ», ըսաւ, և Աննիկ աւնոր ձեռքէն բռնեց իսկոյն : «Անանկ վախցայ որ», ըսաւ զրեթէ հեկեկալով : «Ալ երբեք պիտի չգամ. այսօր ալ գալ չէի ուզեր, բայց մայրս պուռաց և ըսաւ որ գամ» : «Ես ըսեմ քեզի», ըսաւ Պերճ վտահասցնող շեշտով մը, «մենք հիմա շիտակ տուն կ'երթանք և մայրիկիս կը պատմենք : Ան միշտ գիտէ թէ ի՞նչ ընելու է» : Այսպէս երկուքը քաշով երթանք ճամբէն իջան, և թէպէտ միւս աղաքը ջանացին խնդալ, չկրցին շատ յաջողիլ, վասն զի Պերճի անուշ և մտացի դէմքը անոնց զգացումներուն դպաւ : «Անիկա քաջ տղայ մըն է», ըսաւ տղոց մէկը երբ երկուքը գացին : «Այո,

մեզմէ ուէ մէկէն աւելի ճէնթըմէն մը, թէպէտ մենք անկէ մեծ ենք», ըսաւ ուրիշ մը :

Մայրիկը հանդարտեցուց և սփոփեց փոքրիկ Աննիկը, և զանիկա տուն դրկեց երջանիկ, իր աղջկան պզտիկ եկած հագուստներէն մէկն ալ տարով Աննիկի, որու շատ յարմար կու գար, նաև խստատնալով անոր մօրը այցելել : Երբ Աննիկ գնաց, մայրը ծուլեցաւ և համարուեց Պերճը :

«Իմ անգին պատանեակս, իմ սիրուն զաւակս», ըսաւ խանդաղատանքով : «Բայց ես չհամարձակեցայ առաջին անգամ. ուզեցի փախչիլ, երկչոտի պէս, միայն կը մտածէի քեզ, և թէ ի՞նչպէս պիտի ամչնայի եթէ գիտնայիր ատիկա», ըսաւ Պերճ : «Այդ շիտակ էր, սիրելիս, բայց միտք բեր թէ Աստուած ամէն բան կը տեսնէ և գիտէ : Մայրիկը չգիտնայ թեքու. բայց մենք բա՛ն չենք կրնար պահել Անիկ : Ասոր վրայ մտածէ երբ փորձուիս : Պէտք է որ սաստիկ ջանանք չընել ուէ բան որու համար կ'ամբշնանք կամ կը ցաւինք որ Աստուած պիտի գիտնայ. այնպէս չէ՞» : «Ես պիտի ջանամ. բայց, ո՛հ, մայրիկ, երբեմն շատ դժուար է շիտակը ընել պզտիկ բաներու մէջ անգամ» : «Ես գիտեմ, սիրելի զաւակս, բայց յիշէ որ մենք միշտ օգնութիւն ունինք, եթէ խնդրենք» :

«ԵՍ ՊԵՏԻ ԳԻՏՆԱՅԻ»
Բարոյական օրէնքին պարզութիւնը երբեմն աւելի յայտնի է դեռահասներուն քան անոնց որոնք փորձառութեամբ հասկցած են նեղ ճամբուն մէջ քայլելու դժուարութիւնը : Ժամանակաւ փոքրիկ աղջիկներու կարի դաս մը կ'ազմուեցաւ, և շքադրամ մը կը նուիրուէր այն փոքրիկին որ ամէնէն աւելի ճշգրտապահ կ'ըլլար : Բնութեան օրը փոքրիկ Ալիս կանչուեցաւ, իբր միակ աղջիկը որ ոչ բացակայ գտնուած էր և ոչ ուշ եկած էր, և անոր նուիրուեցաւ շքադրամը, բայց աղջիկը չառաւ զանիկա : «Ես կատարեալ չեղայ, օր մը ուշ եկայ», ըսաւ : Եւ պատմեց պարագաները թէ ինչո՞ւ այն ատեն ուշ եկած էր : Այնուհետև Եպիսկոպոս փոթթրք առիթով մը հարցափորձեց զանիկա : «Ինչո՞ւ չառիր շքադրամը, Ալիս», ըսաւ : «Ատիկա ստախօտութիւն պիտի ըլլար», պատասխանեց աղջիկը : «Բու վարժուհիդ պիտի գիտնամ», «Ո՛չ, անիկա այդ օր իմ գալստի շտեսաւ» : «Մայրդ

պիտի գիտնամ» : «Ո՛չ, ես անոր բան չըսի ատոր վրայով» : «Աղէկ, ո՞վ պիտի գիտնար թէ դուն սուտ կը խօսէիր» : Ալիս երեսը կաս կարմիր եղաւ և «Ես պիտի գիտնայի», ըսաւ : Եպիսկոպոսը այնքան հաճոյք զգաց փոքրիկին պատուոյ փափուկ զգացումին համար, որ գեղեցիկ շքադրամ մը չինել տուաւ յատկապէս և անոր զրկեց : Եպիսկոպոսը ի պատասխանի սա նամակը ընդունեց :

«Սիրելի Եպիսկոպոս : Շատ շնորհակալութիւններ այս գեղեցիկ շքադրամին համար : Ասիկա շատ աւելի սիրուն է քան այն զոր չընդունեցի : Չեմ հասկնար թէ ինչո՞ւ ինձի շքադրամ կը զրկէք ճշմարտութիւնը ստեղծու համար, մինչ դուք միշտ բառէք մեզի Կիրակնօրեայ դպրոցին մէջ թէ երբեք պէտք չէ սուտ խօսինք : Ես կը կարծէի թէ դուք ճշմարտ խօսիլ կ'ակնկալէք մեզմէ» :

Չեր փոքրիկ բարեկամը, Ալիս» :

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Թ	ա	բ	օ	բ
բ	ա	ա	ա	ա
ո	ա	բ	բ	ա
ա	ն	ա	բ	ա
ե	բ	ա	ն	ի

Լուծեցին, Կ. Գլխ. — Ե. Ս. Գաբրիելյան, Զ. Մ. Ալեքան : Նիսիսի. — Հրանտ Խաչէն : Արթուր. — Տ. Մ. Միսնան : Ա. Գլխ. — Ստեփան Գերեթէճեան, Ա. Բ. Բոյ. — Սանդուխտ Յ. Աւետիսեան, Սարգիս Խ. Խաչատուր Յ. Անտոնեան, Վարդուհի Մուրատեան : Արտ. — Վարդան Խաչատուրեան, Յակոբ Զառահեան : Կար. — Սեդրակ Յ. Էջմէշեան : Մ. Ան. — Միքայիլ Կ. Ստամբուլեան, Կարապետ Ս. Աւետիսեան, Սարգիս Խ. Խաչատուրեան, Պետրոս Տ. Տէր Գեորգեան, Նշան Ծառնեան, Տոնապետ Խաչատուրեան, Յակոբ Գապարեան, Խորայէլ Տ. Յովհաննէսեան, Գրիգոր Բարսեղեան, Գարեգին և Ներսէս Արիստաքեսեան : Մարտ. — Գաւիթ Խ. Խաչիկեան, Յարութիւն Ղազարեան : Թուս. — Իւզակ Ս. Ալեքան, Արտ. — Վարդան Յ. Յովհաննէսեան, Գաբրիէլ Փափազեան, Անդրանիկ Ա. Նիկողոսեան, Գրիգորիս Կ. Պողէիսեան, Եղիշտեան Գ. Մարգարեան, Աղաւնի Յ. Սարգսեան :

«ՍԵՊՏԵՄԵՐ»

ՔԱՆԱԿՈՒՍԻ ՀԱՆԵՆՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ

1. Հանրածանօթ անուն մը զոր ընդունած են ազգեր բոլոր :
2. Միամտը դուստր նահապետի Ու ապրեցաւ մտ մի գետի :
3. Մարդ մը բարի ու կարեկից, Աբրահամ մի դաշնակից :
4. Ասորած մեծ, որով յերկրի Տէր Աստուած մեր մերթ կը բերկրի : Գրտածները տակէ տակ տար. Երբ ամէն բառ թէ՛ վերէն վար թէ՛ ձախէն ալ դուն կը կարգաս, Նշն բառերուն բարե կու տաս : Կ Գլխ. Կ. Մ. Տ.

Տարեկան բաժանորդագին՝ 6 դր. արծաթ, կանխիկ, ամեն տեղւոյ չամբ :

Ամբիկոյի Միտիսիայի Բնիկութեան կողմէն Արտոնատէր Ճ. Բ. Կրիտ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈՒ ԳՈՍՏԱՆԻՆ
Ֆինանսընթ Եղեռնու, Ամբիկոյի խան